# ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

## ԼԱԶԱՐԵԱՆՑ ՃԵՄԱՐԱՆԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ

*Այս պատուական ձեռագիրը զոր անձամբ տեսայ Լազարեանց Ճեմարանին մէջ եւ ժամանակիս սղութեան պատճառով վեր ի վերոյ միայն քննեցի, կարժէ որ ծանօթացնեմ ընթերցողներուս։ Սակայն նկատելով որ ձեռագրիս մասին նորա լուսատիպ հրատարակութեան Յառաջաբանին մէջ պէտք եղածէն աւելին ըսուած է արդէն, բայց այդ հրատարակութիւնը իր գնոյն բարձրութեան պատճառով մատչելի չէ շատերու, կարեւոր կը համարեմ արտատպել հոս նոյն Յառաջաբանը, մասնաւոր թոյլտուութեամբ մագիստրոս պր. Գր. Խալաթեանցի։*

Կ. Յ. Բ.

## ՅԱՌԱՋԱԲԱՆ

*Լազարեան Ճեմարանի Արեւելեան Լեզուաց հիմնական մատենադարանում պահվում է ի միջի այլոց մի գրչագիր, որ հնագոյնն է մինչեւ այսօր ծանօթ բոլոր հայ գրչագրներից։ Նորա մասին շատ անգամ յիշուած է եղել հայ գրչագրների այլ եւ այլ նկարագրութիւնների մէջ. նորան նուիրուած են եղել եւ մասնաւոր աշխատութիւններ* (1)։ *Այդ՝ յիշեալ մատենադարանի Թ.* 1111 *տպագիր Ցուցակի մագաղաթեայ Աւետարանն է, որ գրուած է խոշոր Մեսրոպեան կամ երկաթագիր տառերով ՅԼԶ. Թուականութեան Հայոց եւ յամի Տեառն* 887։

(1) STASOW, Slawianskiy y Vostotchniy ornament. — STRZYGOWSKI, Das Etschmiadzin-Evangeliar, 1891, Wien. — ՄՍԵՐ ՄԱԳԻՍՏՐՈՍ ՄՍԵՐԵԱՆՑ, *Տեղեկութիւնք զհանգամանաց հնագոյն գրչագիր աւետարանին, որ գտանի ի մատենադարանի Լազարեանց Ճեմարանի.* «*Փարոս*», 1876, *էջ* 28—39. — KH. IOANNESSOV, «Drevnosti vostotchnya», *հտ. Ա, մասն գ, էջ* 454—465։

digitised by A.R.A.R.@

Իբրեւ հնագոյն հայ գրչագիր՝ այս Աւետարանը մեծ կարեւորութիւն ունի հայ հնագրութեան համար եւ մանաւանդ Նոր Կտակարանի բնագրի քննական ուսումնասիրութեան համար՝ ի նկատի առնելով նորա բազմաթիւ տարբեր ընթերցուածները համեմատութեամբ միւս գրչագիր աւետարանների հետ. ոչ պակաս հետաքրքրական է եւ գրչագրի ուղղագրութիւնը։

Լազարեան Ճեմարանի Մասնագիտական Դասարանների (Լիկէօն) Խորհուրդը՝ վաղուց ըմբռնելով հայ դպրութեան այս հազարամեայ յիշատակարանի կարեւորութիւնը գիտութեան համար, միտք յղացաւ սորանից երեք տարի առաջ ամբողջութեամբ տպագրելու յիշեալ գրչագրի բնագիրը հանդերձ կարեւոր լուսաբանութիւններով։ Բայց յետոյ խորհելով, որ այս անզուգական գրչագրի հրատարակութեան մէջ անհրաժեշտ է պահպանել ամենայն ճշտութեամբ մինչեւ վերջին նշանախեցը բոլոր նորա առանձնայատկութիւնները եւ դորանով միջոց տալ մասնագէտներին, որոնք անդադար դիմում են Ճեմարանի վարչութեանը, բուն գրչագրի համար, սորա հաւատարմագոյն օրինակները ունենալ իրենց ձեռքի տակ, — Խորհուրդը վճռեց՝ լոյս ընծայել ամբողջ գրչագիրը լուսատիպ նմանահանութեամբ։

Մասնագիտական Դասարանների Խորհրդի այս գեղեցիկ մտադրութիւնը հաճեց իրագործել՝ Լազարեան Ճեմարանի վերատեսուչ Պրոֆ. Վս. Միլլէրի առաջարկութեամբ՝ Ճեմարանիս Պատուոյ Հոգաբարձու Իշխան Աբամէլիք-Լազարեան՝ նոյն նպատակի համար պատշաճաւոր մի գումար դնելով Խորհրդի տրամադրութեան տակ։

## Ա.

## ԳՐՉԱԳԻՐ ԱՒԵՏԱՐԱՆ ՑԼԶ—887 Թ.

Նախ քան խօսենք գրչագրի առանձնայատկութիւնների մասին, պէտք է գէթ համառօտ կանգ առնել նորա նկարագրութեան վերայ։

Թուղթ՝ 229։ —Մեծութիւն՝ 37×28 սանթիմ.։—Գրութիւն՝ երկսիւն։— Տող՝ 20։ —Նիւթ՝ կոկած դեղնագոյն մագաղաթ՝ տեղ-տեղ պատռած եւ թելով կարած. Դիտելու է, որ կարուածքների մեծագոյն մասը ոչ թէ հետոյ են արած՝ մագաղաթի մաշուելուց, այլ սկզբանէ գրութեան համար նիւթ պատրաստելիս. ուստի նոքա ոչ միայն ժամանակակից են Աւետարանի գրութեանը, այլ նորանից անգամ առաջ։ Այսպէսով մենք ունինք պահած մեր գրչագրում Թ. դարու թելը եւ կարելու ձեւը։ (Տես մանաւանդ գրչագրի թղթ. 73—95)։—Կազմ՝ թղթեայ կաշեպատ՝ նոր։ —Մագաղաթեայ պահպանակ՝ չը կայ։ —Հանգամանք՝ բաւական լաւ, թէեւ գրչագրի վերին լուսանցքը եւ գրութեան մի մասը սկզբում խոնաւութեան կամ ջրի զգալի հետքեր են կրում. վերջինը մանաւանդ հաւա-

digitised by A.R.A.R.@

նական է, որ նոյն մասերում խանձի նշաններ կան․ Աւետարանը ըստ երեւութին վտանգի է ենթարկուած եղել կրակից այրուելու, եւ գրչագրի կողքերը բնագրի հետ մասամբ արդէն խանձուել եւ մասամբ սեւացել են, ուստի տեղ-տեղ անընթեռնլի է բնագիրը․ բացի դորանից՝ հընութեան կամ այլ պատճառով բաւական թուով թերթեր են ընկած գըրչագրից։—Գիր՝ խոշոր Մեսրոպեան կամ երկաթագիր՝ կանոնաւոր եւ գեղեցիկ․ յաճախ գլուխների եւ համարատների սկզբնատառերը կամ գըլխատառերը շատ խոշոր՝ մինչեւ սիւնակի կէսը բռնելով։—Զարդագիր՝ չը կայ։—Խորան՝ միայն սկզբում չորս հատ՝ Եւսեբի ծանօթ նախադրութեան եւ կանոնների համար՝ կարմիր, կանաչ եւ դեղին գոյներով, գործ ոչ հմուտ ձեռքի։ Ա ղ ի ւ ս ա կ ն ե ր ը պակաս են։—Կիսախորան, Լուսանցազարդ, Նկար եւ Մանրանկար՝ բնաւ չըկայ։—Լուսանցագիր՝ կայ եւ յատկապէս Աւետարանի գլխահամարները (ըստ հնագոյն բաժանման) եւ Աւետարանիչների համաբարբառները նշանակելու համար․ վերջինը միշտ ներքին լուսանցքում՝ անմիջապէս սիւնակների տակ՝ միեւնոյն ձեռքով, որով գրուած է գրչագիրը։ Համաբարբառների նշանագրերի մէջ յաճախ պատահում է նոյն սկզբնական գրչից բոլորգիր, որ առանձին ուշադրութեան արժանի է՝ ի նկատի ունենալով Աւետարանի գրութեան ժամանակը։ Բացի դորանից, լուսանցքներում պատահում են բաւական յաճախ՝ մեծաւ մասամբ համառօտ յաւելագրութիւններ օտար գրիչներից՝ բոլոր եւ նոտր գրերով։—Ժամանակ՝ ՑԼԶ․ թուականութեան Հայոց եւ յամի Տեառն 887։—Գրիչ՝ Սահակ Վանանդացի՝ որդի Վարդա Վանանդացւոյ։—Տեղի՝ Վանանդ (Կարու՞ց)։—Ստացող՝ մի քանիսը եւ նոցա յիշատակութիւնները տարբեր ձեռքերով եւ բաւական խառն։ Վերջին ստացողը (թէեւ առանց յիշատակագրութեան) է Թէոդոսիացի վաճառական Խաչուկեան, որ 1847 թ․ նուիրել է գրչագիրը Լազարեան Ճեմարանին։ =Յիշատակագրութիւն՝ երես՝ 2v, 110v, 129v, 229r, 229v։

1․ (Եւսեբի Կարպիանոսի) «Ամոնի Աղէքսանդրացւոյ» եւ այլն․ երես 1r—2r։ կանոնք՝ երես 2v․ համաբարբառների կանոնները պակաս են․ ըստ երեւութին՝ 13'ից միայն մէկն է պահպանուել, այն է՝ «կանոն յոր թիւն ըստ նոսին ածան չորեքին»։ Դիտելու է, որ գրչագրի այս մասը (երես 1r — 2v), չը նայելով տառերի մանրութեան, գրուած է մ ի ե ւ ն ո յ ն սկզբնական գրչից․ դորա ապացոյցն են նոյն գրչութեան ձեւերը․ օր․ բ'ի եւ յ'ի յապաւումը բառերի վերջում (Ան-ֆիմֆ, յուռ), ե'ի տեղ ե, լ'ի տեղ ղ (եղե, թե, այղ, այղում)։ Հմմտ․ նաեւ գրչագրի երես 115v եւ բոլոր համաբարբառները։

2․ Մատթէոսի Աւետարանը՝ երես 3r—72v։

3․ Մարկոսի Աւետարանը՝ երես 73r—110v։

4․ Ղուկասու Աւետարանը՝ երես 111r—179v։

digitised by A.R.A.R.@

5 • Յովհաննու Աւետարանը՝ երես 180r—229r ։

Աւետարանը ո՛չ խորագիր, ոչ գլխահամար այժմեան բաժանմունքով եւ ոչ համարատուն ունենի, սակայն ըստ հնագոյն բաժանման թուանշաններ կան գրուած բնագրի ձախ կողմից, այն է՝ Մատթէոսի Աւետարանում ընդ ամենը ՅԾԵ., Մարկոսի՝ ՄԼԳ., Ղուկասու՝ ՅԽԲ. եւ Յովհաննու՝ ՄԼԲ ։ Դրանից անկախ՝ օտար եւ անվարժ ձեռքով, անշուշտ գրչագրի ընդօրինակութիւնից բաւական յետոյ, դրուած են բնագրում աստղաձեւ կամ խաչաձեւ նշաններ՝ դոցա մօտ ունենալով բոլորակի մէջ նոյնպէս անհարթ Ա. Բ. Գ.... տառեր՝ ըստ երեւոյթին, գլխահամարներ նշանակելու համար ։

6 • Յիշատակագրութիւններ • երես 2r (նոտրագիր).—«Յանուն Տ... եկս «եւ իմ Վարդ... գնեց... Աւետարան մեզ ի յիշատակութիւն... աջին «մեղացս թողութիւն եւ ի յիշատակութիւն Հատուտին եւ... սուրբ «աւետարանս կարդայ զմեզ եւ զմեր ննջեցեալս առ Աստուած յիշեցէ «եւ մեղաց թողութիւն հայցէ եւ Աստուած զձեզ յիշեցէ... արքայու«թեան...։ Եւ ապայ գնեցաք զսուրբ Աւետարանս եղբաւր Թորոսի որք «աւգնական լինին... տղայոցն ։ Տէր Պաւղոսն Սիմաւոնի • ամէն» ։

—Անդ, երկու գունաւոր սիւնակների մէջ՝ նոյնպէս նոտրագիր •

«Եւ որ զայս զսուրբ աւետարանս կարդայ մեղայս թողութիւն հա«ցէ իմ Պաւղոսն Վարդապունին եւ իմ մաւրն Հատուտին եւ Աստուած «ձեզ ողորմեսցի • ամէն» ։

Երես 110v (բոլորգիր).—«Անուամբն Աստուծոյ եւ սուրբ Աստուա«ծայծնին եւ Տէր Յուսիկս եւս Ռստագես եւս Ստեփաննոս եւ Խաչատուրս «եւ մեծ երեց... կատարեցաք ուխտ առ Աստուած շնորհիւ սուրբ Աստուա«ծայծնին եւ ի մարդկանէ Կարապետիս եւ Ներշահիս... Նակնիս եւ «Մեհր.. Սարգսիս եւ Շահանշանիս եւ Գողոյ... եծ Սիմաւոնն Վարդա«պետ... կարապետի եւ Խաչատրուս եւ որ ասացա... եւ մեք Սարկա«ւագոյն եւ երկոյ Գրիգոր միայբանեմք սուրբ Աստուածայծնիս եւ «Աստուծոյ եւ եղբարք եմք իրերաց եւ կեանք եւ մահն լինի մեզ եւ «Աստուած խաղ... թիւն պահէ զեղբարութիւնն եւ ննջեցելոցն ողոր«մութիւն շնորհէ» ։

—Անդ, փոքր ինչ ստորեւ՝ նոյնպէս բոլորգիր •

«Զմէր Յոհաննէս յիշեցէք ի Քրիստոս եւ զձեզ յիշէ ի Քրիստոս յիւր արքայութիւն • ամէն» ։

Երես 129v (բոլորգիր) • Զմէր Յոհաննէս յիշեցէք ի Քրիստոս» ։

Երես 179v (երկաթագիր՝ սկզբնական գրչից) •

«Փառք քեզ Յիսուս Քրիստոս որդի Աստուծոյ ողորմած եւ բազմագութ ողորմեա ինձ ի քում գալստեան» ։

Երես 229v (գրչագրի վերջին երեսը՝ երկաթագիր, գուցէ նոյն սկզբնական գրչից • հնացած եւ գունատ լինելու պատճառով դժուարութեամբ է կարդացվում յիշատակագրութիւնը •

digitised by A.R.A.R.@

«․․․ի մաքրութիւն հոգւոց իմոյ եւ կողակցի իմոյ գտանել զո-
«ղորմութ(իւն) յաւուրն այցելութեան աղաչեմ զձեզ սիրողք Քրիստոսի
«որ ընթ(եռ)նուն (զ)սուրբ աւետարանդ ան(մոռ)աց յիշմամբ հայցել յա-
«մենեցո(ւն)ց արարչէն զթողութիւն իմ(ոց յանց)անաց Տէր Յիսուս Քր-
«իստոս ողորմեա ինձ»։

Եւս 229r․ գլխաւոր յիշատակարան (երկաթագիր)․

(Սիւնակ առաջին) «Փառք պատիւ եւ գոհութիւն սուրբ երրորդու-
«թեանն այժմ եւ հանապազ յաւիտեանս ամէն։ Զգրաւղս սորա եւ զաշ-
«խատաւորսս որ ոք ընթեռնու եւ կարեսցէ յաւրինակէս յարժանաւոր
«աղաւթս ձեր յիշեսջիք։

(Սիւնակ երկրորդ) «Գրեցաւ սուրբ եւ կենսաբեր աւետարանս այս
«ՅԼԶ թուականութեան Հայոց ի հայրապետութեանն Գէորգայ Հայոց
«կաթաղիկոսի եւ յիշխանութեանն Աշոտի իշխանաց իշխանի եւ ի տէ-
«րութեանն Սբատայ Բագրատունւոյ․ ես Սահակ Վանանդացի որդի Վար-
«դա Վանանդացւոյ որում կրկին Մլեհ կոչեն[ն]»։

Յիշատակարանի մէջ կան սխալներ, որոնք առաջ են եկել ընդօրինակողի մոռացութիւնից․ այսպէս՝ «կարեսցէ» փոխ․ ձկարեսցէ (եւ ոչ կաղապարեսցէ, ինչպէս ենթադրեցին ոմանք), «կաթաղիկոսի» փոխ․ կաթուղիկոսի, «Սբատայ» փոխ․ Սմբատայ։ Յիշատակարանի մէջ յիշուած են երեք ժամանակակից անձերի անուններ՝ Գէորգ, Աշոտ եւ Սմբատ։ Դոցանից առաջինը Հայոց կաթողիկոսն էր՝ երկրորդը իւր համանունների կարգին, որ իշխեց Թ․ Հ․ ՅԻԴ—ՅԽԶ (875—897 թ․)։ Երկրորդը՝ Արաբաց ամիրապետներից նշանակուած «իշխանաց իշխան» տիտղոսով ժամանակի Հայոցըն գհանուր հրամանատարն էր եւ կառավարիչը, որ վարեց այդ պաշտօնը Թ․ Հ․ ՅԺԱ—ՅԼԶ (862—887), ճիշտ այն թուականը, երբ աւարտած է Աւետարանի ընդօրինակութիւնը․ իսկ նոյն ՅԼԶ․ թուին թագաւոր օծուեց Աշոտը Գէորգ կաթողիկոսի ձեռամբ եւ՝ գահակալելով մինչեւ ՅԽ․ թ․ (891), մեռաւ 71 տարեկան հասակում։ Երրորդը նոյն Աշոտի երեց որդին էր, որ իւր հօր իշխանութեան ժամանակ՝ եւ յատկապէս ՅԼԶ թուականին, չափահաս մարդ էր անշուշտ եւ հօրը օգնական՝ իբրեւ կուսակալ այս կամ այն նահանգի․ ուստի «տէրութիւն» ոչ թէ թագաւորութիւն է նշանակում այստեղ, ինչպէս կարծեցին ոմանք (որովհետեւ դեռ Աշոտը ինքը թագաւոր չը լինելով, չէր կարող նորա կենդանութեան ժամանակ թագաւորել իւր որդին Սմբատ),—այլ որ եւ է նահանգի վարչութիւն կամ տիրութիւն։ Արդեօք Սմբատի տիրութեանը յանձնուած նահանգը Վանանդ չէ՞ր կարուց, որտեղից հաւանականաբար ծագում էր եւ գրչագրի ընդօրինակողը Սահակ (Վանանդացի), որը հարկ է համարել յիշել եւ իւր նահանգի պետի կամ իշխանի անունը։ Հօր թագաւորանալուց յետոյ Սմբատ «իշխանաց իշխան» տիտղոսը սկսաւ կրել եւ նորա մահից յետոյ թագաւորեց մինչեւ Թ․ Հ․ ՅԿԴ (915)։

digitised by A.R.A.R.@

## Բ.

## ԳՐՉԱԳՐԻ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

Գրչագիր Աւետարանում շատ տեղ նկատվում են տարբեր ընթերցուածներ. որոնցից մի քանիսը բառերով միայն եւ միւսները իմաստով եւս զանազանվում են տպագիր օրինակներից. օրինակի համար.

### ՄԱՏԹԷՈՍ.

| Գլուխ. | Համար. | գրչագիր. | տպագիր. |
|---|---|---|---|
| Դ. | 22. (1) | Նոցա թողեալ վաղվաղակի զնաւն եւ զգործիսն՝ գնացին զհետ նորա: | Նոցա թողեալ վաղվաղակի զնաւն եւ զհայր իւրեանց՝ գնացին զհետ նորա: |
| Թ. | 3. | Ասեն ընդ միտս. ո՞վ է սա, որ եւ զմեղս թողու: | Ասեն ընդ միտս. հայհոյէ դա: |
| — | 16. | Առնու ելանէ զսերտութիւն նորա ի հանդերձէն: | Առնու ելանէ զլրութիւն նորա ի հանդերձէն: |
| *ԺԱ. | 4. | Ոչ էր արժան նմա ունել. | Ոչ էր օրէն նմա ունել. |
| ԺԴ. | 30. | Եւ ասէ. տէր՝ աւգնեա՛ ինձ: | Եւ ասէ. տէ՛ր՝ փրկեա՛ զիս: |
| *ԺԹ. | 24. | Դիւրին է անցանել մալխոյ. | Դիւրին է մալխոյ մտանել. |
| *ԻԱ. | 38. | Եւ մեր լիցի ժառանգութիւն սորա. | Եւ կալցուք զժառանգութիւն սորա: |
| *ԻԶ. | 7. | Շիշ իւղոյ մեծագնի. | Շիշ իւղոյ ծանրագնի. |
| ԻԳ. | 6. | Սիրեն զյառաջակայս յնթրիս: | Սիրեն զյառաջագահս յընթրիս: |
| ԻԷ. | 31. | Մերկացին ի նմանէ զքղամիդն: | Մերկացուցին ի նմանէ զքղամիդն: |
| ԻԸ. | 4. | Եւ եղեն որպէս մեռեալք. | Եւ եղեն իբրեւ զմեռեալ (կամ՝ զմեռեալս): |

### ՄԱՐԿՈՍ.

| Գլուխ. | Համար. | գրչագիր. | տպագիր. |
|---|---|---|---|
| Ա. | 11. | Ձայն եղեւ յամպոյն: | Ձայն եղեւ յերկնից: |
| — | 13. | Եւ էր նա անդ զաւու- | Եւ էր նա անդ զաւուրս քառասուն |

(1) Գլուխները եւ համարները նշանակուած են տպագիր օրինակների համաձայն:

digitised by A.R.A.R.@

| | | |
|---|---|---|
| | ՚րըս քաղաքուն փորձել ի սատանայէ։ | փորձեալ ի սատանայէ։ |
| Բ. 19. | Միթէ մա՞րթ ինչ իցէ որդւոց առագաստի սուգ ունել՝ մինչ փեսայն ընդ նոսա իցէ։ | Միթէ մա՞րթ ինչ իցէ որդւոց առագաստի՝ մինչ ընդ նոսա իցէ փեսայն՝ պահել։ |
| *Գ. 26. | Եւ եթէ սատանա.... յարիցէ եւ բաժանեալ իցէ։ | Եւ եթէ սատանայ... յարեաւ եւ բաժանեալ իցէ. |
| — 27. | Եւ ո՛չ ոք կարէ ի տուն հզաւրի մտանել եւ զկարասի նորա աւար հարկանել։ | Այլ ո՛չ ոք կարէ զկարասի հզօրի մտեալ ի տուն նորա աւա՛ր հարկանել։ |
| *Դ. 26. | Արկանիցէ ՚սերմանիս յագարակի. | Արկանիցէ սերմանիս յերկիր. |
| — 36. | Եւ առնուն զնա նաւաւն հանդերձ եւ զայլս եւս նաւս՝ որ եին անդ։ | Եւ առնուն զնա նաւաւն հանդերձ, եւ զայլ եւս նաւսն որ էին ընդ նմա։ |
| Ե. 9. | Եւ ասէ ցնա. զ՚էգէոն անուն է իմ. քանզի բազումք եին։ | Եւ ասէր ցնա. լէգէոն է անուն իմ. քանզի բազումք եմք։ |
| — 39. | Մանուկդ ո՛չ է մեռեալ, այլ կենդանի։ | Մանուկն (կամ մանուկդ) ո՛չ է մեռեալ, այլ ննջէ։ |
| Զ. 5. | Եւ ո՛չ կամէր անդ՝ եւ ո՛չ մի ինչ զօրութիւն առնել. բայց սակաւիկ հիւանդաց ձեռն եդեալ՝ բժշկեաց զնոսա։ | Եւ ո՛չ կարէր անդ՝ եւ ո՛չ մի ինչ զօրութիւն առնել, բայց սակաւ հիւանդաց ձեռն եդեալ՝ բժշկէր զնոսա. |
| — 18. | Ո՛չ է աւրէն քեզ ունել զդաիկնութեան, | Ո՛չ է օրէն քեզ ունել զկին եղբօր քոյ։ |
| — 33. | Եւ դնացին բազումք։ | Եւ զգացին բազումք։ |
| *— 40. | Որ հարիւր եւ որ յիսուն. | Ուր հարիւր եւ ուր յիսուն. |
| *Ը. 17. | Թե հաց ոչ բարձաք. | Թէ հաց ոչ ունիք. |
| *— 35. | Որ կամեսցի զանձն իւր կեցուցանել։ | Որ կամիցի ապրեցուցանել զանձն իւր. |
| ԺԴ. 5. | Մարթ էր զայդ իւղդ վաճառել երեքարիւր դենարի։ | Մարթ էր զայդ իւղ վաճառել աւելի քան երեքհարիւր դահեկանի։ |
| *ԺԵ. 36. | Ելից սպունգն լի քացախով. | Ելից սպունգ մի քացախով. |
| *— 39. | Արդարեւ այրս այս արդար է. | Արդարեւ այրս այս Որդի Աստուծոյ է. |

digitised by A.R.A.R.@

| | | |
|---|---|---|
| *— 46. | Պատեաց պաստառակալաւ... զոր փորեաց ի վիմին. | Պատեաց կտաւովն... զոր էր փորեալ ի վիմէ. |

ՂՈՒԿԱՍ.

| | | |
|---|---|---|
| Ա. 3. | Զհետ երթեալ էի ամենայն ճշմարտութեան: | Զհետ երթեալ էի ամենայնի ճշմարտութեամբ: |
| — 48. | Հայեցաւ ի տառապանըս աղախնոյ իւրոյ: | Հայեցաւ ի խոնարհութիւն աղախնոյ իւրոյ: |
| Բ. 3. | Եւ երթային ամենեքին մտանել յաշխարհագիրն յիւրաքանչիւր քաղաքէ: | Եւ երթային ամենեքեան մըտանել յաշխարհագիր յիւրաքանչիւր քաղաքի: |
| *— 18. | Վասն բանիցն զոր խաւսեին զնմանէ հովիւքն: | Վասն բանիցն զոր խօսեցան ընդ նոսա հովիւքն. |
| — 51. | Եւ Յիսուս զարգանայր իմաստութեամբ եւ հասակաւ, եւ շնորհք Աստուծոյ էին ի վերայ նորա: | Եւ Յիսուս զարգանայր իմաստութեամբ եւ հասակաւ՝ եւ շնորհօք յԱստուծոյ եւ ի մարդկանէ: |
| Գ. 5. | Եւ եղիցին ամենայն դժուարինք ի դիւրինս, եւ առապարք ի հարթըս ճանապարհաց: | Եւ եղիցին դժուարինքն ի դիւրինս, եւ առապարքն ի հարթ ճանապարհս: |
| — 22. | Եւ գալ ձայն ի յերկնից: | Եւ գալ ձայն յերկնից: |
| Ը. 30. | Զի՞նչ անուն է քո: | Զի՞նչ անուն է քեզ: |
| Թ. 49. | Տեսաք զոմն՝ որ յանուն քո դեւս հանէր, եւ արգելաք զնա՝ զի մի՛ շրջեսցի ընդ մեզ: | Տեսաք զոմն զի յանուն քո դեւս հանէր՝ եւ արգելաք զնա. զի ո՛չ շրջի ընդ մեզ: |
| *Ժ. 13. | Վաղու եւս արդեաւք խորգով եւ մոխրով ապաշխարեալ էր. | Վաղուց եւս ի խորգ եւ ի մոխիր նստեալ ապաշխարեալ էր. |
| — 24. | Բազում մարգարէք ցանկացան տեսանել զոր տեսէքդ՝ եւ ո՛չ տեսին, եւ լսել զոր լուայքդ եւ ո՛չ լուան: | Բազում մարգարէք եւ թագաւորք կամեցան տեսանել զոր դուքդ տեսանէքդ՝ եւ ո՛չ տեսին, եւ լսել զոր լսէքդ եւ ոչ լուան: |
| — 40. | Եւ Մարթա զբաղեալ էր զբաղում սպասու: | Եւ Մարթա զբաղեալ էր ի բազում սպասու: |

digitised by A.R.A.R.@

| | | |
|---|---|---|
| ԺԱ. 3. | Զհաց մեր հանապազորդ տո՛ւր մեզ աւուր ըստ աւուրէ։ | Զհաց մեր հանապազորդ տո՛ւր մեզ զօր ըստ օրէն։ |
| — 22. | Զապառազինութիւն նորա առնու՝ յոր յուսացեալն էր։ | Զապառազինութիւն նորա հանէ յոր յուսացեալ էր։ |
| ԺԴ. 8. | Գուցէ պատուականագոյն որ քան զքեզ իցէ կոչեցեալ ի նմանէ։ | Գուցէ պատուականագոյն եւս քան զքեզ իցէ կոչեցեալն ի նմանէ։ |
| — 23. | Ե՛լ ի հրապարակս եւ ի ցանգս։ | Ե՛լ ի ճանապարհս եւ ի ցանգս։ |
| ԺԵ. 15. | Եւ գնաց յարեցաւ ի մի ումն ի քաղաքացեաց։ | Եւ գնացեալ յարեցաւ ի մի ումն քաղաքացւոց։ |
| ԺԶ. 2. | Զի՞նչ է այս զոր ասեն զքէն։ | Զի՞նչ է այս զոր լսեմս զքէն։ |
| — 6. | Կա՛լ զգիր քո, եւ նի՛ստ գրեա՛ վաղվաղակի վաթսուն։ | Կա՛ զգիր քո, եւ նի՛ստ գրեա՛ վաղվաղակի յիսուն։ |
| — 7. | Կա՛լ զգիր քո. եւ նիստ գրեա՛ յիսուն։ | Կա՛ զգիր քո, եւ նի՛ստ գրեա՛ ութսուն։ |
| — 21. | Եւ ցանգայր յագել ի փշրանացն։ | Եւ ցանկայր լնուլ զորովայն իւր ի փշրանացն։ |
| ԺԹ. 7. | Առ առն մեղաւորի եմուտ ագանել։ | Առ առն մեղաւորի եմուտ լուծանել։ |
| Ի. 1. | Ի միում աւուրցն այնոցիկ, մինչ դեռ ուսուցանէր զժողովուրդն ի տաճարին։ | Ի միում աւուրցն յայնցանէ, մինչ դեռ ուսուցանէր զժողովուրդն ի տաճարին անդ։ |
| — 2. | Ո՞վ ետ քեզ զիշխանութիւնդ զայդ։ | Ո՞վ է՝ որ ետ քեզ զայդ իշխանութիւն։ |
| ԻԱ. 14. | Մի՛ յառաջագոյն կրթել տալ պատասխանի։ | Մի՛ յառաջագոյն կրթել տալոյ պատասխանի։ |
| ԻԲ. 26. | Եւ որ առաջինն՝ իբրեւ զպաշտաւոր։ | Եւ առաջնորդն իբրեւ զըսպասաւորն։ |
| — 46. | Զի մի՛ անդանիցէք ի փորձութիւն։ | Զի մի՛ մտանիցէք ի փորձութիւն։ |
| — 47. | Զայն նշան տուեալ էր նորա։ | Զայն նշան տուեալ նոցա։ |
| — 71. | Զի՞նչ եւս պիտոյ են մեզ վկայք։ | Զի՞նչ եւս պիտոյ է մեզ վկայութիւն։ |

digitised by A.R.A.R.@

| | | |
|---|---|---|
| ԻԴ. 40. | Եցոյց նոսա զձեռս եւ զկողս իւր։ | Եցոյց նոցա զձեռսն եւ զոտսն։ |

ՅՈՎՀԱՆՆԷՍ.

| | | |
|---|---|---|
| Դ. 42. | Դա՛ է ճշմարիտ Փրկիչն աշխարհի։ | Դա՛ է ճշմարտիւ փրկիչ աշխարհաց։ |
| Է. 8. | Ժամանակ իմ չեւ՛ է հասեալ։ | Իմ ժամանակ չեւ է լցեալ։ |
| — 17. | Եթէ ես յանձնէ ինչ խաւսեցայ։ | Եթէ ես յանձնէ իմմէ խօսիմ։ |
| — 26. | Եւ չասեն ինչ դմա։ | Եւ չասեն ինչ ընդ դմա։ |
| ԺԳ. 1. | Սիրեաց զիւրսն որ յաշխարհի աստ էին։ | Սիրեաց զիւրսն որ յաշխարհի աստ են։ |
| ԺԶ. 15. | Զամենայն ինչ զոր ունիցի հայր՝ իմ է։ | Զամենայն ինչ զոր ունի հայր՝ իմ է։ |
| ԺԷ. 10. | Եւ որ ինչ իմ է՝ այն քո՛ է։ | Եւ որ ինչ իմ է, ամենայն քո՛ է։ |
| ԺԹ. 17. | Եւ ելանէր ի տեղին անուանեալ Գագաթն։ | Եւ ելանէր ի տեղին՝ որ անուանէր Գագաթան։ |
| — 23. | Իսկ պատմուճանն. | Իսկ զպատմուճանն։ |
| — 27. | Եւ յայնմանէ առ զնա աշակերտն այն առ իւր։ | Եւ յայնմ ժամանակէ առ աշակերտն զնա առ իւր։ |

Ոչ սակաւ նախադասութիւններ գրչագրում զանազանվում են տպագիր օրինակներից ճեռականական դասաւորութեամբ կամ բառերի այլ տեսակ շարադասութեամբ. բազմաթիւ օրինակներից՝ միայն մի քանիսն ենք առաջ բերում.

ՄԱՏԹԷՈՍ.

| | | |
|---|---|---|
| ԺԳ. 46. | Եւ գտեալ մարգարիտ մի պատուական։ | Եւ գտեալ մի պատուական մարգարիտ։ |
| ԺԴ. 22. | Եւ ստիպեաց զաշակերտսն վաղվաղակի մտանել ի նաւ։ | Եւ ստիպեաց վաղվաղակի զաշակերտսն մտանել ի նաւ։ |
| ԻԸ. 35. | Զյանձանս նոցա ի սրտից ձերոց։ | Ի սրտից ձերոց զյանցանս նոցա։ |
| ԻԶ. 40. | Այդպէս ո՛չ կարացէք ժամ մի արթուն կալ ընդ իս։ | Այդպէս ո՛չ կարացէք մի ժամ արթուն կալ ընդ իս։ |

digitised by A.R.A.R.@

## ՄԱՐԿՈՍ.

| | | |
|---|---|---|
| Ա. 10. | Նախ ցելեալ զերկինս, եւ զՀոգին Աստուծոյ զի իջանէր իբրեւ զաղաւնի ի վերայ նորա։ | Նախ ցելեալ զերկինս, եւ զՀոգին Աստուծոյ իբրեւ զաղաւնի՝ զի իջանէր ի վերայ նորա։ |
| — 45. | Մինչեւ ո՛չ իսկ կարաւղ լինել նմա յայտնապէս մտանել ի քաղաքն։ | Մինչ ո՛չ եւս կարող լինել նմա յայտնապէս ի քաղաք մտանել։ |
| Բ. 16. | Զի՞ է զի ընդ մաքսաւորս եւ ընդ մեղաւորս ուտէք եւ ըմպէք։ | Զի՞ է՝ զի ընդ մեղաւորս եւ ընդ մաքսաւորս ուտէք եւ ըմպէք։ |
| Ե. 30. | Գիտաց յանձն իւր Յիսուս։ | Գիտաց Յիսուս յանձն իւր։ |
| Զ. 13. | Եւ աւծանէին զբազում հիւանդս իւղով։ | Եւ օծանէին իւղով զբազում հիւանդս։ |
| ԺԴ. 50. | Յայնժամ աշակերտքն ամենայն թողին զնա եւ փախեան։ | Յայնժամ թողին զնա աշակերտքն ամենեքին եւ փախեան։ |
| — 70. | Եւ խաւսք քո իսկ նման են։ | Եւ խօսքդ իսկ քո նման են։ |

## ՂՈՒԿԱՍ.

| | | |
|---|---|---|
| Ը. 13. | Յորժամ լսիցեն զբանն, խնդութեամբ ընդունին. | Յորժամ լսիցեն, խնդութեամբ ընդունին զբանն. |
| — 22. | Ել ի նաւ ինքն եւ աշակերտքն նորա։ | Ինքն ել ի նաւ, եւ աշակերտք նորա. |
| Թ. 44. | Դի՛ք դուք զբանս զայսոսիկ ի լսելիս ձեր. | Դի՛ք դուք ի լսելիս ձեր զբանս զայսոսիկ. |
| Ժ. 41. | Եւ զբաղեալ ես զբազում իւիք. | Եւ զբազում իւիք զբաղեալ ես. |
| ԺԶ. 22—23. | Մեռաւ եւ մեծատունն եւ թաղեցաւ, եւ ի դժոխսն ամբարձ զաչս իւր։ Եւ մինչ ի տանջանսն էր, տեսեալ զԱբրահամ. | Մեռաւ եւ մեծատունն՝ եւ թաղեցաւ. եւ ի դժոխսն ամբարձ զաչս իւր մինչ ի տանջանսն էր. տեսեալ զԱբրահամ. |
| ԺԷ. 7. | Ասիցէ ցնա՝ ա՛նց վաղվաղակի բազմեաց. | Ասիցէ ցնա վաղվաղակի, թէ ա՛նց բազմեաց. |
| ԺԹ. 38. | Աւրհնեալ թագաւորդ որ գայ յանուն տեառն. | Օրհնեա՛լ որ գայ թագաւորդ յանուն տեառն. |
| Ի. 24. | Զո՞յր պատկեր ունի կամ զգիր. | Զո՞յր պատկեր եւ զգիր ունի. |

digitised by A.R.A.R.@

| | | |
|---|---|---|
| ԻԲ. 20. | Այս բաժակ նոր ուխտ է իմով արեամբ. | Այս բաժակ է նոր ուխտ (կամ՝ ուխտի) իմով արեամբ. |
| ԻԳ. 8. | Եւ ակն ունէր տեսանել ինչ ի նմանէ նշանս. | Եւ ակն՝ ունէր նշան ինչ լսել (կամ՝ լեալ) տեսանել ի նմանէ. |

ՅՈՎՀԱՆՆԷՍ.

| | | |
|---|---|---|
| Դ. 24. | Եւ երկրպագուացն նորա պա՛րտ է հոգւով եւ ճշմարտութեամբ երկիրպագանել. | Եւ երկրպագուացն նորա՝ հոգւով եւ ճշմարտութեամբ պարտ է երկիր պագանել. |
| Է. 1. | Ո՛չ կամէր շրջել ի Հրէաստանի, զի խնդրէին Հրէայքն սպանանել զնա. | Ո՛չ կամէր ի Հրէաստանի շրջել, զի խնդրէին զնա Հրէայքն սպանանել. |
| ԺԹ. 8. | Իբրեւ լուաւ Պիղատոս ըզբանս զայսոսիկ. | Իբրեւ լուաւ զբանս զայսոսիկ (կամ՝ զայս) Պիղատոս. |
| — 34. | Եւ ել վաղվաղակի արիւն եւ ջուր. | Եւ վաղվաղակի ել արիւն եւ ջուր. |

Գրչագրում կան մի քանի բառեր կամ նախադասութիւններ, որոնք պակասում են տպագիրներում. կան նոյնպէս եւ բառեր կամ նախադասութիւններ, որ չկան գրչագրում՝ սովորաբար ընդօրինակողի մոռացմամբ։ Առաջին տեսակից են.

ՄԱՏԹԷՈՍ.

Բ. 9. Եկեալ եկաց ի վերայ այրին՝ (1) ուր էր մանուկն.

Դ. 8. Առնու ածէ զնա սատանայ եւ հանէ ի լեառն մի բարձր յոյժ.

Ե. 20. Որդւոյ մարդոյ ո՛չ գոյ տեղի՝ ուր դիցէ զգլուխ իւր.

ԺԸ. 11. Զի եկն որդի մարդոյ խնդրել եւ կեցուցանել զկորուսեալն.

ԻԷ. 42. Զի տեսցուք եւ հաւատասցուք զմա.

ՄԱՐԿՈՍ.

Բ. 3. Բերէին անդամալոյծ մի ի մահիճս բարձեալ ի չորից.

— 16. Ուտէ եւ ըմպէ ընդ մաքսաւորս եւ ընդ մեղաւորս.

ԺԴ. 25. Յորժամ արբից զնա զոր ընդ ձեզ յարքայութեանն Աստուծոյ.

ՂՈՒԿԱՍ.

ԺԹ. 47. Իսկ քահանայապետք եւ դպիրք եւ ծերք եւ գլխաւորք ժողովրդեանն.

ԻԲ. 30. Ուտիցէք եւ ըմպիցէք ընդ իս յարքայութեանն իմում.

ԻԳ. 43. Այսաւր ընդ իս իցես ի ներքս ի դրախտին.

(1) Նոտրագրերը պակասում են տպագիր օրինակներում.

digitised by A.R.A.R.@

ՅՈՎՀԱՆՆԷՍ.

Զ. 59. Կերան հարքն ձեր զմանանայն յանապատին եւ մեռան.
Թ. 24. Կոչեցին զայրն՝ որ երբեմն կոյրն էր.
ԺԸ. 38. Ես եւ ո՛չ մի ինչ պատճառս մահու գտանեմ ի նմա.
ԺԹ. 24. Եւ ի վերայ պատմուճանի իմոյ վիճակս արկանէին։ Եւ
Նստեալ պահէին զնա։ Զինուորքն զայս ինչ գործեցին.

Երկրորդ տեսակիցն են.

| գրչագիր. | | | | | տպագիր. |
|---|---|---|---|---|---|
| ի Մատթէոսի | ի 13 | համարն | Բ | գլխոյ. | եւ անդ լինիջիր ցորչափ ասացից քեզ. |
| » | ի 21 | » | ԺԹ | » | եւ ե՛կ զկնի իմ. |
| ի Մարկոսի | ի 15 | » | Բ | » | քանզի էին բազումք՝ որ երթային զհետ նորա. |
| » | ի 19 | » | — | » | Ցորքան ընդ իւրեանս ունիցին զփեսայն, ո՛չ է մարթ պահել. |
| » | յ2 | » | Դ | » | բազում ինչ. |
| » | ի 19 | » | Ե | » | եւ Յիսուս ո՛չ ետ նմա թոյլ. |
| » | ի 25 | » | Զ | » | վաղվաղակի. |
| » | ի 50 | » | — | » | քաջալերեցարուք. |
| » | ի 53 | » | — | » | եկին. |
| » | ի 28 | » | Է | » | սեղանոյ. |
| » | ի 61 | » | ԺԴ | » | Աստուծոյ. |
| ի Ղուկասու | յ36 | » | Ա | » | կոչեցեալ. |
| » | ի 24 | » | Ժ | » | եւ թագաւորք. |
| » | ի 29 | » | ԺԲ | » | եւ մի՛ զբաղնուք. |
| » | ի 16 | » | ԺԳ | » | ահաւասիկ ութուտասն ամ. |
| » | ի 17 | » | ԺԴ | » | ի ժամու ընթրեացն. |
| » | ի 43 | » | ԺԹ | » | եւ նեղեսցեն զքեզ. |
| » | յ3 | » | ԻԱ | » | աղքատ. |
| » | յ30 | » | ԻԲ | » | ի սեղան իմ. |
| | ի 43<br>ի 44 | » | — | | եւ երեւեցաւ նմա հրեշտակ յերկնից՝ եւ զօրացուցանէր զնա. եւ է՛ր ի տագնապի, եւ մտադիւրութեամբ եւս կայր յաղօթս. եւ հոսէին ի նմանէ քրտունք իբրեւ զկայլակս արեան ոլո՛ռն ոլո՛ռն հեղեալ ի յերկիր. |
| » | յ8 | » | ԻԴ | » | եկալ. |

digitised by A.R.A.R.@

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| » | ի 22 | » | — | » | մանու․ |
| » | ի 51 | » | — | » | Հրէից․ |
| » | ի 6 | » | ԻԴ | » | չէ՛ աստ, այլ յարեաւ․ |
| ի Յովհաննու | ի 4 | » | Ե | » | եւ հրեշտակ Տեառն ըստ ժամանակի իջանէր յաւազանն եւ յուզէր զջուրսն․ եւ որ նախ ի շարժումն ջուրցն իջանէր՝ բըժշկէր․ ո՛չ ունելով նշան հիւանդութեան․ |
| » | ի 21 | » | Թ | » | կամ թէ ո՞վ եբաց զաչս դորա, մեք ո՛չ գիտեմք․ |
| » | յ8 | » | ԺԲ | » | զաղքատս յամենայն ժամ ընդ ձեզ ունի՛ք․ զիս ո՛չ հանապազ ընդ ձեզ ունիք․ |
| » | յ7 | » | ԺԴ | » | եւ տեսէք (կամ՝ տեսիք) զնա․ |
| » | ի 24 | » | ԻԱ | » | եւ գիտեմք, եթէ ճշմարիտ է վկայութիւն նորա (1)․ |

Գրչագրում բնաւ պակասում են՝ նախնաբար եւս չը լինելով նորա մէջ․ նախ՝ Մարկոսի Աւետարանի ԺԶ․ գլխի վերջին մասը՝ «Յարուցեալ Յիսուս» սկսուածով, որն որ Վենետկեան 1805 թ․ հրատարակութիւնը (Զոհրաբի)՝ համաձայն այլ գրչագիրների, առանձին է դնում՝ իբր Յաւելուած, իսկ Վենետկեան 1860 թուականի տպագրութիւնը, որպէս եւ վերջին Կ․ Պօլսինը (1895 թ․), անընդհատ միացնում են նոյն գլխի 8-րդ համարատան, վերջին հրատարակութիւնը այդ մասին դիտողութիւն եւս անելով ծանօթութեան մէջ․ եւ երկրորդ՝ շնացեալ կնոջ ամբողջ պատմութիւնը, որ 1860 թուի Վենետկեան տիպը բնաւ բաց է թողնում, իսկ Զոհրաբինը դնում Յովհաննու Է․ գլխի վերջում՝ գլխակարգութիւնից դուրս, մինչդեռ Կ․ Պօլսինը Ը․ գլխում 1—11 համարատունը՝ դարձեալ մասնաւոր ծանօթութիւն դնելով այդ մասին։

Գրչագիրը ունի եւ ուղղագրութեան վերաբերեալ բազմաթիւ տարբեր կամ անսովոր ձեւեր, որոնցից իբրեւ օրինակ դնում ենք՝ այստեղ մի քանիսը․

Աւելադրութիւն յ տառի (բառի մէջ)․ յայգեցան․

» » » (բառի վերջը)․ դարձոյ, մառոյ, հատոյ,

---

(1) Վերաբերեալ համեմատական երեք հատուածները քաղում ենք հանգուցեալ Մսեր Մագիստրոս Մսերեանցի վերը յիշած յօդուածից։ Մ․ Մսերեանցի առաջ բերածների վրայ՝ առաջին հատուածում, աւելացրինք եւս մի շարք տարբեր ընթերցուածներ, քաղելով դոցա պ․ Ստ․ Տէր-Սարգսեանցի մանրակրկիտ ձեռագիր բաղդատութիւններից եւ որոշելով այդպիսիքը ատաղանիշով (*)։

digitised by A.R.A.R.@

գործեայ, կոչեայ, Նմայ, ամայ.

Աւելադրութիւն վ տառի — ովմն, ովմանք, ովմանց, զովմանս, զովք, որովգայթ, Պետրովս (տեղ-տեղ), քարովզութիւն, քարովզել, ովգուոց, բարւովք.

Աւելադրութիւն ր » — պարհել, պարհս.

Ցապաւումն նախընթաց ը տառի. յնթրիս, զնկեր, զնտրեալ, յնչից, յնծայյն (բայց՝ ընթրիք, ընկեր, ընծայ...)

Ցապաւումն բ տառի — (բառի վերջում.) արդեամք, ողջամ, մատամն, քարամք, եղեգամ, տեսլեամ, իշխանութեամ, ճշմարտութեամ.

Ցապաւումն ե » — հրշտակ (սովորաբար, եւ միայն մի-երկու դէպքում՝ հրաշտակ.)

Ցապաւումն յ » — (բառի մէջ.) զգոշ, վկաից, հայհութիւն.

Ցապաւումն » » — (բառի վերջը). ողորմեցա, համեցա, բանա, երկեա, քաղցեա, առեա, պիտո, դո, սատանա, ձործո, արտաքո, միո, յորդւո, Թզենւո.

Ե փոխանակ Է'ի. (սովորաբար) Թե, եթե, ե, եին, խնդրեին, ուտեին, որպես, այնպես, եղեց, ապաքեն, պատուեր, զքեն, ի Նազարեթե.

Է » Ե'ի. արէգակն, փէսայ, ցէրեկ. Է ունին եւ առաջիկայ բայերը կատարեալում՝ Էգաւ, Էհան, Էթող, Էհար.

Գ » Կ'ի. անգեան, մանգունք, մանգտի, յանգողնիս, յունգանէ, անգեալ, ցանգացան (եւ ընդ հակառակը՝ մի-երկու տեղ. ժառանկութիւն, անկոանել, հանկիցեն).

Ս » Զ'ի. սգեցեալ, սչարել, սապարէս.

Ով » Աւ'ի. ամովթ, բովական, (կայ եւ բաւական), համբով, համբովել, նոքովք, զնոքովք, ղենջակովն, արտասուովք.

Աւ » Ո, ով, ոյ եւ ու. աւսաւխ, պարանաւց, Ցաւհաննէս, Նազաւրացի, անաւշ, Նշաւղ, տանաւտէր.

Ո, ու » Աւ'ի. ոգուտ, յուժար, յուժարել, ծնողք (սակաւ).

Ղ » Լ'ի. այղ, նեղեաղ, այղակերպել, Թոյղ.

Իւ » Ի'ի. (եւ ընդհակառակը.) շիւղ, ափիոս, ուղիւղ, Պիւղատոս.

Ու » Ե'ի. իումաւք, ուրումն (եւ որումն):

Արժանի է ուշադրութեան եւ գրչագրի կետադրութիւնը, որ՝ ըստ երեւութին, որոշ կանոնի է ենթարկուած: Գրչագրում կան եւ բազմա-

digitised by A.R.A.R.@

թիւ ցառասխալներ, որոնք աչքի են ընկնում համարեա ամեն մի երեսում, ուստի եւ աւելորդ համարեցինք օրինակներ առաջ բերել։

Գրչագրում տեղ-տեղ թերթերի ծայրերը մաշուելով հնութիւնից եւ տեղ-տեղ թերթեր ընկնելով՝ պակասում են ոչ միայն բառեր ու համարներ, այլ եւ ամբողջ գլուխներ, որոց ցուցակը դնում ենք այստեղ.

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Մատթէոսի | Աւետ. | պակասում | են.. | Գլ. | ԺԱ. | համ. | 9-23. |
| » | » | » | »... | » | ԺԲ. | » | 7-50. |
| » | » | » | »... | » | ԺԳ. | » | 1-38. |
| Մարկոսի | » | » | »... | » | Թ. | » | 11-49. |
| » | » | » | »... | » | Ժ. | | (ամբողջ). |
| » | » | » | »... | » | ԺԱ. | » | 1-32. |
| Ղուկասու | » | » | »... | » | Գ. | » | 1-23. |
| » | » | » | »... | » | Դ. | | (ամբողջ). |
| » | » | » | »... | » | Ե. | » | 13-39. |
| » | » | » | »... | » | Զ. | | (ամբողջ). |
| » | » | » | »... | » | Է. | » | 1-16. |
| » | » | » | »... | » | Ը. | » | 42-55. |
| Յովհաննու | » | » | »... | » | Ա. | | (ամբողջ). |
| » | » | » | »... | » | Բ. | | (ամբողջ). |
| » | » | » | »... | » | Գ. | | (ամբողջ). |
| » | » | » | »... | » | Դ. | » | 1-23. |
| » | » | » | »... | » | Զ. | » | 10-39. |

## Գ.

## ԱՒԵՏԱՐԱՆԻ ԼՈՒՍԱՏԻՊ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ։

Մեր լուսատիպ հրատարակութիւնը բուն գրչագրի 2/3-որդ մեծութիւնն ունի, այն է՝ 24,66×18,60 սանթիմեթր։ Գրչագիրը ժամանակից խառն եւ չփոթ լինելով թերթերի դասաւորութեան կողմից, այն է՝ շատ տեղ յետ ու առաջ կազմուած լինելով, ստիպուած էինք կարգի բերել նորան եւ երեսահամարներ նշանակել մեզանից արաբական թուանշաններով՝ երեսների ներքեւում (1), իսկ աջ եւ ձախ երեսը որոշելու համար դրինք թուանշաններին կից՝ r (recto) եւ v (verso) տառերը (այսպէս՝ 1r, 1v, ... 229r, 229v)։

Մեր լուսատիպը ճշգրիտ եւ հաւատարմագոյն օրինակ է բուն գրչագրին. սակայն մի քանի տեղ՝ հակառակ գործ դրած ամեն միջոցներին, եւ լուսագրութեան արուեստից անկախ պատճառներով, ոչ այնչափ պարզ է դուրս եկել լուսատպի մէջ, որչափ այդ ցանկալի էր։ Այսպէս՝

(1) Մի տեղ միայն խնդրում ենք ուղղել մեր սխալը. 27r-v եւ 28r-v երեսները տեղափոխել։

digitised by A.R.A.R.@

*բաւական աղօտ է եւ ընթերցանութեան համար դժուարին՝ Եւսեբի կա-նոնի առաջին երեսի վերին տողերը (1r) եւ Աւետարանի մի-երկու տասնեակ երեսների վերին ծայրերը, որոց բուն գրչագրում խոշորացու-ցի միջոցով կարողացանք ջոկել։ Այդ հատուածները աւելորդ չը համա-րեցինք տպագրութեամբ վերականգնելու մեր Յառաջաբանում։*

*Երես 1 r. Ամօնի Աղէքսանդրացւոյ բազում աշխատութեամբ եւ ճշգրտիւ փոյթ ի մէջ առեալ զսա ի չորից եթող մեզ զաւետարանն Մատթեան Աւետարանիս զհամաբարբառս այլոց աւետարանչացն զգրուածս եղեալ առընթեր, որպէս զի հարկ է դիպել չար ի կարգի երիցն եւս չա-պականել օրչափ ըստ միայար ընթերցուածոցն։*

*Արդ զի ողջանդամ եւ զայլոցն եւս բնաւ զմարմնոցն եւ զչարի ու-նիցիս գիտել զանցնիւրսն ըստ իւրաքանչիւր Աւետարանի ի տեղիս զորս նոքիմք ածան առել ճշմարտասիրութեամբ. զաշխատութենէ զառաջա-գոյն ասացելոյ առնն առեալ պատճառս ըստ այլում զումարութեան. կա-նոնս տասն թւով դրոշմեցի քեզ ներքնակարգեալս, որոց առաջինն ու-նի զթիւս զորս համգոյնս միմեանց ասացին չորեքին. Մատթէոս, Մար-կոս. Ղուկաս, Յովհաննէս. երկրորդն զորս երեքն. Մատթէոս, Ղուկաս, Յովհաննէս. չորրորդն զորս երեքն. Մատթէոս, Մարկոս, Յովհաննէս հինգեր—(երես 1v)....*

| Երես. | Սիւն. | Տող. | |
|---|---|---|---|
| 3r | Ա. | 1. | Գիրք ծննդեան Յի Քի \| |
| 18v | Բ. | 1. | հաւատս զոր երբեք |
| 28r | — | 1. | համոյ եղեւ առ[աջի] |
| 52r | — | 1-5. | ակս իւրեանց եւ \| երկայնեն զքղանցս \| հանդերձից իւրեանց \| սիրեն զյառաջագ \| ահս յնթրիս եւ \| |
| 53r | Ա. | 5. | Իսկ արդ ո ր դ ն ո ւ ի սե \| |
| 72r | — | 1. | կալան զոտս |
| 72v | Բ. | 1-2. | Որպէս առաքեաց զի \| ս հայր իմ եւ ես \| |
| 73v | Բ. | 19-20. | Ապաշխարեցէք եւ հաւ \| ատացէք յաւետարանն \| |
| 74v | — | 1-2. | Եւ զնոսա ի նաւին մի \| նչ կազմեին զուռկս \| նոն |
| 77v | — | 8-9. | այից \| |
| 78r | — | 1. | զձեռն քո \| |
| 78v | Ա. | 1. | [բա]զում ժողովուրդ \| |
| 79r | Բ. | 1. | եին եկին ուն[ել զ] \| |
| 136r | Ա. | 3-4. | նորեաց որ ոչ բարձցի \| ի սմանէ \| |
| 155r | Բ. | 1-2. | ասիցէ ապաշխարեմ \| թողցես նմա \| |
| 155v | — | 4. | ցՏր. յաւի մեզ |
| 166v | Ա. | 1. | ունէր արկ \| |
| — | Բ. | 1-2. | ցաւ ժամանակ մի \| երթայցէք զկնի նորա \| |
| 167r | Ա. | 1. | Բայց յառաջ քան \| |

digitised by A.R.A.R.@

188r — 2· ձեզ երկոտասան |
197r — 1· Նա պատասխանի ետ |
209r — 1· համարեէին եթէ զի |
216r — 1· Յայնմիկ
218v Բ· 1· այնորիկ Մաղքոս
219r Ա· 1-2· ղովրդեանն | Երթային
220v Բ· 1· [Դ]ու ասես եթէ թագաւ |
221r Ա· 1· ձակեցից ձեզ ի զա[տ] |
221v Բ· 1· Նութիւն ունիմ հան |
222r Ա· 1· Ամենայն ոք որ
222v Բ· 1· Ասեն ցՊիղատոս քա |
223r Ա· 1-2· պատառեցուք զա··· | այդ արկցուք վիճակ |
223v Բ· 1· եւ բարձցին |
224v — 1-2· ···ն քան զՊետրոս եւ եկն նախ |
225r Ա· 1· կեալն էր յառաջ[ա] |
225v Բ· 1· ···· եկոյ միաշա |
226r Ա· 1-2· փչեաց ի նոսա եւ | ···առէք
227r — 1· Պետրոս երթիամ ձուկն
227v Բ· 1· ···ճաշեցէք եւ |
228r Ա· 1-3· Ասէ ցնա | արածեա | զգառս |
228v Բ· 1 2· կացցէ դա մինչեւ | եւ դամ
229r Ա· 1-6· զոր եթէ գրեալ էր | մի ըստ միոջէ | կարծեմ թէ եւ
ոչ | աշխարհս բովակ|ան էր տանել զգիրսն | որ եթէ
գրեալ եին |

Ամենից վերջը դնում ենք Աւետարանիչների Գլուխների ցանկը՝ յարմարցնելով դորան գրչագրի երեսներին·

ՄԱՏԹԷՈՍ·

Գլ· Ա· . . . էջ 3r սճ· ա տղ· 1· Գիրք ծննդեան Յի Քի
» Բ· . . . » 4v » ա » 14· Եւ ի ծնանելն Յի
» Գ· . . . » 6v » ա » 8· Յաւուրսն յայնոսիկ
» Դ· . . . » 7v » բ » 16· Յայնժամ վարեցաւ Յս
» Ե· . . . » 9v » բ » 10· Եւ տեսեալ զժողովուրդսն
» Զ· . . . » 13r » ա » 18· Զգոյշ լերուք
» Է· . . . » 16r » ա » 5· Մի զատիք զի մի զատիցիք
» Ը· . . . » 18r » ա » 3· Այդ իբրեւ էջ նա ի լեռնէ
» Թ· . . . » 20r » բ » 20· Եւ մտեալ ի նաւ
» Ժ· . . . » 23r » բ » 7· Եւ կոչեցեալ առ ինքն
» ԺԱ· (պակաս· » 26r » բ » 20· 28rա-28vա 2· Եւ եղեւ
համ· 9-23 հմ·) իբրեւ կատարեաց

digitised by A.R.A.R.@

» ԺԲ. (պակաս. » 28v » ա » 3. Ցայնժամ գնաց Յս
հան. 7-50 հմ.)
» ԺԳ. (պակաս. » 27r » ա » 1. 27v, 29rա. բ (38)... Որ որդիքն
1-38 հմ.) արքայութեան են
» ԺԴ. . . . » 29v » ա » 1. Ցայնմ ժամանակի
» ԺԵ. . . . » 31v » բ » 6. Ցայնժամ մատեան
» ԺԶ. . . . » 34v » ա » 1. Եւ մատուցեալ փարիսեցիքն
» ԺԷ. . . . » 36v » ա » 4. Եւ յետ վեց աւուր.
» ԺԸ. . . . » 38v » ա » 5. Ցայնմ աւուր մատեան
» ԺԹ. . . . » 41r » բ » 6. Եւ եղեւ իբրեւ կատարեաց
» Ի. . . . » 43v » ա » 9. Քանզի նման է
» ԻԱ. . . . » 45v » բ » 8. Իբրեւ մաւտ եղեն.
» ԻԲ. . . . » 49r » բ » 4. Դարձեալ պատասխանի ետ
» ԻԳ. . . . » 51v » բ » 17. Ցայնժամ խաւսեցաւ Յս
» ԻԴ. . . . » 54v » ա » 6. Եւ ելեալ Յս ի տաճարէն.
» ԻԵ. . . . » 57v » բ » 14. Ցայնժամ նմանեսցի
» ԻԶ. . . . » 61r » ա » 11. Եւ եղեւ իբրեւ կատարեաց
» ԻԷ. . . . » 66v » ա » 8. Իբրեւ այգ եղեւ
» ԻԸ. . . . » 71r » բ » 3. Եւ յերեկոյին շաբաթուն

## ՄԱՐԿՈՍ

» Ա. . . . » 73r » ա » 1. Սկիզբն Աւետարանի Յի
» Բ. . . . » 75v » բ » 10. Եւ մտեալ դարձեալ ի Կափառնայում
» Գ. . . . » 77v » բ » 16. Եւ եմուտ միւսանգամ ի ժողովուրդն
» Դ. . . . » 80r » ա » 9. Դարձեալ սկսաւ ուսուցանել
» Ե. . . . » 82v » բ » 5. Եւ եկն յայնկոյս ծովուն
» Զ. . . . » 85v » ա » 6. Եւ ել անտի եւ եկն
» Է. . . . » 89v » բ » 12. Եւ ժողովեցան առ նա
» Ը. . . . » 92r » բ » 19. Յաւուրսն յայնոսիկ
» Թ. (պակաս. » 95r » բ » 4. Եւ յետ վեց աւուր
11-49 հմ.)
» Ժ. (պակաս)
» ԺԱ. (պակաս. » 96r » ա » 1. Երկնչիմք ի ժողովրդենէն
1-32 հմ.)
» ԺԲ. . . . » 96r » ա » 14. Եւ սկսաւ խաւսել
» ԺԳ. . . . » 99r » բ » 18. Եւ յելանելն ի տաճարէ
» ԺԴ. . . . » 102r » ա » 4. Եւ էր զատիկն . . . .
» ԺԵ. . . . » 107r » ա » 6. Եւ վաղվաղակի ընդ առաւաւտն
» ԺԶ. . . . » 110r » ա » 4. Եւ իբրեւ անց շաբաթն .

digitised by A.R.A.R.@

ՂՈՒԿԱՍ·

Գլ· Ա· . . . էջ 111r սն·ա տղ· 1· Քանզի բազումք

» Բ· . . . » 115v » բ » 5· Եւ եղեւ ընդ աւուրսն

» Գ· (պակաս· » 119r » ա » 6· Ի հնգետասաներորդի ամի տէրու-
1-23 հմ·) թեան

» Դ· (պակաս)

» Ե· (պակաս· » 121r » ա » 1· [Եւ եղեւ ի խռնել զնո]վաւ ժողո-
13-39 հմ·) վրդեանն

» Զ· (պակաս)

» Է· (պակաս· » 122r » ա » 1· սին եւ փառաւոր անեին
1-46 հմ·)

» Ը· (պակաս· » 124v » ա » 10· Եւ եղեւ յետ այնորիկ
42-55 հմ·)

» Թ· . . . » 128r » ա » 11· Եւ կոչեցեալ

» Ժ· . . . » 132v » բ » 11· Յետ այսորիկ երեւեցոյց

» ԺԱ· . . . » 136r » ա » 5· Եւ եղեւ ի տեղւոջ

» ԺԲ· . . . » 140r » բ » 18· Որովք ի կուտել

» ԺԳ· . . . » 144v » բ » 5· եկին ոմանք

» ԺԴ· . . . » 147v » ա » 10· Եւ եղեւ ի մտանելն

» ԺԵ· . . . » 150r » բ » 4· Եւ էին մերձ առ նա

» ԺԶ· . . . » 152v » ա » 8· Եւ ասէ առ աշակերտսն

» ԺԷ· . . . » 154r » բ » 17· Ասաց եւ առ աշակերտսն իւր

» ԺԸ· . . . » 157r » բ » 15· Ասաց եւ առակ մի

» ԺԹ· . . . » 160r » բ » 2· Եւ մտեալ շրջէր ընդ Երիքով

» Ի· . . . » 153r » բ » 16· Եւ եղեւ ի միում աւուրցն

» ԻԱ· . . . » 166r » բ » 5· Եւ հայեցեալ ետես

» ԻԲ· . . . » 168v » բ » 1· Մերձեցաւ տաւն

» ԻԳ· . . . » 172v » բ » 9· Եւ յարուցեալ

» ԻԴ· . . . » 176r » բ » 11· Բայց ի միաշաբաթուն

ՅՈՎՀԱՆՆԷՍ·

» Ա·
» Բ· } պակասեն
» Գ·

» Դ· (պակաս· » 180r » ա » 1· Այղ եկեացէ
1-23 հմ·)

» Ե· . . . » 182r » ա » 20· Յետ այսորիկ տաւն էր

» Զ· (պակաս· » 185r » բ » 20· Յետ այսորիկ գնաց
համ· 10-39 հմ·)

» Է· . . . » 188r » ա » 11· Եւ յետ այսորիկ

digitised by A.R.A.R.@

» Ը. . . . » 191r » բ » 20. Դարձեալ խաւսեցաւ
» Թ. . . . » 194v « բ » 5. Եւ մինչդեռ անցանէր
» Ժ. . . . » 197r » բ » 3. Ամէն ամէն ասեմ
» ԺԱ. . . . » 199v » բ » 8. Եւ էր ոմն հիւանդ
» ԺԲ. . . . » 203v » ա » 1. [Իսկ Յս վեց աւուր]ք [յառ]աջ քան զզատ[իկն]
» ԺԳ. . . . » 207r » ա » 7. Յառաջագոյն քան զտաւնն
» ԺԴ. . . . » 209v » բ » 5. Մի խռովեսցին սիրտք
» ԺԵ. . . . » 212r » ա » 1. Ես եմ որթն
» ԺԶ. . . . » 213v » բ » 11. Զայս խաւսեցայ
» ԺԷ. . . . » 216r » բ » 2. [Զայս իբրեւ խաւսեցաւ Յս ամ-բարձ զ]աչս իւր
» ԺԸ. . . . » 218r » ա » 6. Զայս իբրեւ ասաց
» ԺԹ. . . . » 221r » ա » 10. Յայնժամ առ Պիղատոս
» Ի. . . . » 224r » բ » 17. Եւ ի միաշաբաթւոջ
» ԻԱ. . . . » 226v » բ » 3-229r ա. Յետ այսորիկ դարձեալ
ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ 229r ա» Փառք պատիւ եւ գովութիւն

ԳՐ. ԽԱԼԱԹԵԱՆՑ.

15 Յուլիսի 1899 Թ.
Մոսկուա.
Լազարեան Ճեմարան։

digitised by A.R.A.R.@